ՀԱՅԵՐԵՆԻ ԳԱՂՏՆԱՎԱՆԿԱՅԻՆ Ը-ի ՀՆՉՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՐԵԶԱ ՂԱՐԱԳՅՈՒԶՅԱՆ

Յուրաքանչյուր լեզվի հնչական ինքնատիպությունը պայմանավորված է ոչ միայն տվյալ լեզվի հնչյունների տմբողջ կազմով, այլև այդ լեզվի հնչյունների իրար զուգորդելու և կապակցվելու հնարավորություններով։

Հայերենի հնչական առանձնահատկություններում կարևոր դեր է կատարում գրավոր արտահայտություն չունեցող ը *ձայնավորով կազմվող վանկը, որը ստացել է գաղտնավանկ անվանումը։*

Փորձառական ուսումնասիրությամբ հաստատվել է, որ ը*-ն, որպես հայերենի ձայնավոր 6 հնչույթներից մեկը, մյուս ձայնավորների համեմատությամբ ավելի սուղ է՝ ավելի կարճ։* Ը*-ն գրական հայերենում շեշտ չի կրում։*

Ինչո՞վ է պայմանավորված գաղտնավանկային ը*-ի հնչումը հայերենում։ Քննենք այդ հարցն ըստ բառասկզբի, բառավերջի և բառամիջի դիրքերի։*

Ը*-ի* արտասանությունը բառասկզբում.— *Բառասկիզբը և առհասարակ վանկասկիզբը հայերենում բնութագրվում է մեկ բաղաձայնի կանոնով։ Սա հայերենի բառասկզբի հնչական կարևոր առանձնահատկությունն է, ըստ որի բառասկզբում չի կարող արտասանվել երկու բաղաձայն։ Բացառություն է կազմում բաղաձայն+յ կապակցությունը, ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում (վանկասկզբում). օրինակ՝* ճյուր, բյուրեղ, գյուղ, սյուն, կյանք, Երդ-վյալ, ան-կյուն *և այլն, որը բացատրվում է գրաբարյան երկբարբառները երկհնչյունի վերածվելու փաստով (հմմտ. գրաբար* ճիւր, բիւրեղ, գիւղ, սիւն, կեանք, անկիւն *և այլն)։*

Բառասկզբում գրության մեջ արտահայտվող երկու և ավելի բաղաձայնների արտասանությունն իրացվում է երկու ճանապարհով։

ա) Եթե բառը սկսվում է շփականի և պայթականի՝ սկ, սպ, ստ, սք, սf, շպ, շտ, զբ, զգ *զուգորդություններով, ապա դրանցից առաջ հնչվում է մի թույլ* ը*, որը բառասկզբի մեկ կամ երկու բաղաձայնների հետ կազմում է գաղտնավանկ, ինչպես՝* ը*ս/տեղծել,* ը*ս/պիտակ* ը*զ/բաղված,* ը*շ/տապ,* ը*ստրուկ,* ը*ստվեր և այլն*[1]*։ Այս երևույթն ավելի շատ արտահայտվում է կապակցված խոսքում, երբ վերոհիշյալ հնչյուններին նախորդում է բաղաձայնով վերջացող բառ, ինչպես՝* մենք ը*զբաղված* ենք, դուք ը*սկսեք և այլն։ Երբ հիշյալ հնչյուններին նախորդում է ձայնավոր, լինի դա երկու բառերի սահմանագծում, թե բառամիջում, ապա* ը*-ի հնչման անհրաժեշտություն չի առաջանում։ Օրինակ՝* Նա ստիպում է, մի՛ շտապիր, բանաստեղծ, լողազգեստ *և այլն։*

---

[1] *Այս կանոնը համապարփակ չէ։ Նույն հնչյուններով սկսվող մի շարք բառերում գաղտնավանկը կազմվում է առաջին շփական հնչյունից հետո, ունենալով լիահունչ արտահայտություն, ինչպես՝* սը/պասս, շը/փոթ, սը/պրդել, շը/պրտել *և այլն։*

Սա հնչական ավանդական օրինաչափություն է և իր դրսևորումն է գտել ժողովրդական երգերում ու չափածոյում։ Բերենք մի օրինակ.

Եվ ես աշխարհում ապրում եմ քանի,
Չե՛մ կարող սիրով, սրտով իմ անհագ,
Ձգացմունքներիս հորձանքով բեղուն
Չսիրել կյանքի լիությունն անհաս,
Ամբողջությունը այս բազմազեղուն....

(Ե. Չարենց, «Խոհ»)

Պետք է սակայն նշել, որ ներկայումս արևելահայերեն կենդանի խոսքում, հատկապես նոր սերնդի խոսքում, որոշակի միտում է դիտվում այդ կարգի բառերը հնչել շատ թույլ ը-ով, որը մեծ մասամբ լսելի չէ։

բ) Բառասկզբում երկու և ավելի այլ բաղաձայններ լինելու դեպքում՝ առաջին բաղաձայնից հետո կազմվում է լիահունչ գաղտնավանկ. օրինակ՝ բ[ը]նազդ, կ[ը]ուսկ, ճ[ը]մուտ, ճ[ը]ոքիր, գ[ը]մբեթ, խ[ը]լեց և այլն։

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն դեպքերը, երբ միավանկ (փակ վանկ ունեցող) բառերի ուղիղ ձևի ու կամ ի ձայնավորները բառի աճման ժամանակ սղվել են, և սղված ձայնավորի փոխարեն բառասկզբի երկու բաղաձայնների միջև հնչվում է ը, ինչպես՝ մուկ–մ[ը]կան, տուն–տ[ը]նակ, գիր–գ[ը]ուավոր, կիր–կ[ը]ուի և այլն։

«Կ» եղանակիչը և «չ» ժիտականը բաղաձայնասկիզբ բառերին միանալու դեպքում՝ միմիայն ը-ի հետ կազմում են լիահունչ, զգալիորեն ընդգծված գաղտնավանկ, որը միշտ, որպես կանոն, բաց է. օրինակ՝ կ[ը]/բերի, կ[ը]/-խոսի, չ[ը]/բերել, չ[ը]/խոսել, կ[ը]/խ[ը]փի և այլն։

Այլ դեպքերում բառասկզբի գաղտնավանկը կարող է լինել բաց կամ փակ, նայած բաղաձայնների թվին։ Երկուսից ավելի բաղաձայն լինելու դեպքում գաղտնավանկը միշտ փակ է։ Համեմատիր, օրինակ՝ թ[ը]ր/ծել, ճ[ը]ր/-կիգել, ճ[ը]ռն/վել և չ[ը]/խ[ը]մել, չ[ը]/f[ը]նել, կ[ը]/խ[ը]փի, կ[ը]/-f[ը]նի և այլն։

Այս տեսակետից ավելորդ չէ համեմատել նույնպիսի հնչյուններով սկսվող երկու բառաձևեր՝ չfնել և չfնաղ, որոնք հնչվում են չ[ը]/f[ը]նել և չ[ը]f/նաղ, մի դեպքում՝ եռավանկ, մյուս դեպքում՝ երկվանկ, որտեղ «չը»-ն (նաև «կը»-ն), որպես քերականական իմաստի կրող, բառարմատից, որպես կանոն, առանձնանում է վանկաբաժանով։

Բառասկզբում երեքից ավելի բաղաձայններ լինելու դեպքում (դա ավելի շատ պատահում է բնաձայնական բառերում)՝ կազմվում են մեկից ավելի գաղտնավանկեր, ինչպես, օրինակ՝ թ[ը]ոթ[ը]նջուկ, մ[ը]շտ[ը]նջենական, f[ը]ոթմ[ը]նջոց, դ[ը]ռ[ը]խկդ[ը]ռ[ը]խկալ և այլն։

Հ–ի արտասանությունը բառավերջում.— Բառավերջը արտասանությամբ զգալիորեն տարբերվում է բառասկզբից։ Բառավերջում, ի տարբերություն բառասկզբի, երկու (երբեմն և երեք) բաղաձայնների կից արտասանությունը սովորական է։ Օրինակ՝ ճոոթ, միոգ, ճիշտ, դոոշմ, վարդ, ճողմ, զգեստ, միջանցf, կուրծf և այլն։

Այլ է, երբ բառավերջի երկու բաղաձայններից վերջինը ր, ն, ղ *կամ* ռ *է։ Այսպիսի դեպքերում հիշյալ հնչյուններից առաջ, որպես կանոն, արտասանվում է գաղտնավանկային* ը, *ինչպես՝* բարձ[ը]ր, ման[ը]ր, տետ[ը]ր, հյուս[ը]ն, դաշ[ը]ն, այսինք[ը]ն, բուռ[ը]ն, դառ[ը]ն, հանդուգ[ը]ն, արկ[ը]ղ, կոճ[ը]ղ, աստ[ը]ղ, գամփ[ը]ռ *և այլն։*

*Այս կանոնը տարածվում է նաև բառավերջի բաղաձայն+*լ *զուգորդության վրա, որին ենթարկվում են օտարազգի փոխառյալ բառերը, ինչպես՝* ցիկ[ը]լ, անսամբ[ը]լ, մյուզիք[ը]լ, Գրենոբ[ը]լ *և այլն։ Հայերենն այսպիսի բառավերջ չունի*[2]*։*

Դա նշանակում է, որ բաղաձայնի և ր, ն, ղ, ռ, լ *հնչյունների կապակցված հնչումը բառավերջում հայերենին, մասնավորապես արևելահայերենին, հատուկ չէ։ Այս հնչյունները բառավերջում չեն կարող անմիջապես հաջորդել բաղաձայնի և բաղաձայնի հետ հնչվել կապակցված։ Այդ պատճառով էլ նշված հնչյուններից առաջ հնչվում է գաղտնավանկային* ը: *Բացառություն են կազմում այն բառերը, որոնցում* ր, ն, ռ *հնչյուններին նախորդում է* յ. *օրինակ՝* այր, այն, ժայռ, սայլ, փայլ *և այլն։* –

Ըստ հայերենի ավանդական արտասանության՝ ը *է հնչվում նաև բառավերջի երկու նույնական բաղաձայնների միջև. օրինակ՝* ին[ը]ն, իմովսան[ը]ն, յուռվսան[ը]ն, անդոր[ը]ր, տար[ը]ր, միատար[ը]ր: *Սակայն, բառավերջի կրկնակ* ր-*ի արտասանության մեջ նկատելի փոփոխություն է կատարվել, ըստ որի կրկնակ* ր-*ն ներկայումս շատերի կողմից հնչվում է ոչ թե գաղտնավանկով, այլ զգալիորեն երկարացված, այսինքն ոչ թե* տար[ը]ր, *այլ՝* տարր:

Ը-ի արտասանությունը բառամիջում.—*Գաղտնավանկային հնչումը որոշ դժվարություններ է հարուցում բառամիջում, հատկապես գաղտնավանկի հնչման տեղի տեսակետից։*

Բաղաձայնական կուտակումները, որոնք բառամիջում բնականաբար ավելի շատ են, առաջանում են ձայնավորների սղման, բառաբարդման, ածանցման և հապավման ճանապարհով։

Բառամիջում երեք և երբեմն չորս բաղաձայններ (դրանց թվում և ձայնորդներ) կարող են հանդիպել միմիայն երկու ձևույթների կցույթում, ինչպես և ձայնավորների սղման ժամանակ. օրինակ՝ շրջ/մոլիկ, ամպ/հովանի, վարձ/կան, ընդ/հանուր, զարկ/վել, հարս/տես, միջանցք/ներ, տաղտ/կալի, գանգ/րացնել, արծ/վաթիչ, թ[ը]ռչ/նային, արտ/գործ/կոմ *և այլն։*

Կարևոր է նկատի ունենալ, որ բաղաձայնների կապակցման այն օրինաչափությունները, որոնք գործում են բառավերջում և բառասկզբում, գրեթե նույնությամբ երևան են գալիս և բառամիջում՝ վանկավերջում և վանկասկզբում։

Նախ նշենք, որ այն բառերն ու արմատները, որոնք բառասկզբի դիրքում ունեն գաղտնավանկ, սկզբից ստանալով որևէ բաղադրիչ (ածանց, ար-

---

2 Ր, Ն, Ղ, Ռ *հնչյուններով կազմված բառավերջի գաղտնավանկը, որը արևելահայերենում ներկայումս մեկ լիարժեք վանկ է (դա հաստատվել է փորձառական ուսումնասիրությամբ), հնում թույլ է հնչվել և այդ պատճառով կես վանկ է համարվել, ինչպես՝* կարծ[ը]ր, բարձ[ը]ր, արկ[ը]ղ, աստ[ը]ղ *և այլն, որոնք համարվել են մեկևկես վանկանի բառեր։ Արևմտահայերենում ներկայումս էլ բառավերջի* ր, ն, ղ, ռ *հնչյուններից առաջ հնչվող* ը-*ն թույլ արտահայտություն ունի։*

մատ, եղանակիչ և այլն), բառամիջում իրենց հնչումը սովորաբար նույնությամբ պահպանում են (բացառությամբ այն սակավաթիվ դեպքերի, երբ բաղադրիչների հարաբերությունը հստակ չի գիտակցվում), ինչպես՝ բադակ[ը]տուց, ամենահ[ը]մուտ, անճ[ը]ստակ, նաև՝ կ[ը]գ[ը]ռի, չ[ը]խ[ը]ռանի և այլն։ Բառակազմական գործոնով պայմանավորված՝ նույն հնչյունների զուգորդությունը բառամիջում կարող է հնչվել տարբեր եղանակով, համեմատիր, օրինակ, անգլերեն և անգ[ը]լուխ։

Բառամիջում երեք բաղաձայնի զուգորդումը կարող է հնչվել առանց գաղտնավանկի այն դեպքում, երբ բաղաձայնական խմբի առաջին երկու հնչյունները կապակցելի են, այսինքն այդպիսի վանկ հայերենում կա. օրինակ՝ հաստ/լիկ (հմմտ. հաստ, փաստ), հանձ/նել (հմմտ. տանձ, սանձ), պաշտ/պան (հմմտ. հաշտ, վաշտ), արբ/շիռ (հմմտ. բարբ), հանգ/չել (հմմտ. հանգ, կանգ), ընդ/միջում (հմմտ. հանդ, գունդ), սոդանցք/ներ (հմմտ. անցք, բռունցք) և այլն։

Երբ բառամիջում առնվազն երեք բաղաձայնից երկուսը վանկավերջում անկապակցելի են, ապա նրանց միջև սովորաբար հնչվում է գաղտնավանկ. օրինակ՝ հափ[ը]շտակել, պատ[ը]շգամբ, ապ[ը]ստամբություն և այլն։ Եթե բառամիջում բաղաձայնական կուտակման մեջ կա սղված ձայնավոր, ապա մեծ մասամբ կազմվում է գաղտնավանկ, եթե սղված ձայնավորի պատճառով իրար հանդիպած երեք բաղաձայններից երկուսն անկապակցելի են։ Օրինակ՝ ծ[ը]ծ[ը]մբաթթու (հմմտ. ծծումբ), սեր[ը]նդակից (հմմտ. սերունդ), ազն[ը]վագույն (հմմտ. ազնիվ) և այլն։

Կարևոր է նկատի ունենալ նաև բառավերջը։ Եթե բառը (բազմավանկ) վերջանում է երկու բաղաձայնով, ապա գաղտնավանկի հնչումը սղված ձայնավորի տեղում դառնում է պարտադիր[3], ինչպես՝ շ[ը]շ[ը]նջալ (հմմտ. շշունջ), մ[ը]ռմ[ը]նջալ (հմմտ. մռմունջ), շ[ը]ռ[ը]նդալից (հմմտ. շռինդ), ծ[ը]ն[ը]նդյան (հմմտ. ծնունդ), սեր[ը]նդակից (հմմտ. սերունդ), ս[ը]ն[ը]նդալի (հմմտ. սնունդ), նար[ը]նջագույն (հմմտ. նարինջ), ս[ը]ր[ը]ն-գաճար (հմմտ. սրինգ), աճ[ը]ռդասրահ (հմմտ. աճուռդ), անդ[ը]նդախոր (հմմտ. անդունդ), կոր[ը]ստարեր (հմմտ. կորուստ), փախ[ը]ստական (հմմտ. փախուստ), պ[ը]դ[ը]նձագործ (հմմտ. պղինձ), սոս[ը]նձել (հմմտ. սոսինձ), հանգ[ը]ստավայր (հմմտ. հանգիստ), փամփ[ը]շտակալ (հմմտ. փամփուշտ), երաժ[ը]շտագետ (հմմտ. երաժիշտ), ամբար[ը]շտություն (հմմտ. ամբարիշտ), կամ[ը]ռշակ (հմմտ. կամուրջ), ան[ը]ռջել (հմմտ. անուրջ), խ[ը]ռխ[ը]նջալ (հմմտ. խռխինջ), եղ[ը]նջիկ (հմմտ. եղինջ), չ[ը]մ[ը]շկասաճք (հմմտ. չմուշկ), կ[ը]ռ[ը]նչալ (հմմտ. կռինչ), մ[ը]ռ[ը]նչալ (հմմտ. մռունչ), բ[ը]ր[ը]նձաճատիկ (հմմտ. բրինձ), պար[ը]սպապատ (հմմտ. պարիսպ), խար[ը]սխել (հմմտ. խարիսխ), հար[ը]ստություն (հմմտ. հարուստ), կոր[ը]ստյան (հմմտ. կորուստ), գալ[ը]ստյան (հմմտ. գալուստ), խորհ[ը]ռդային (հմմտ. խորհուրդ), տ[ը]ռա[ը]նջալ (հմմտ. տրտունջ)՝ գրեթե բոլոր հնչյունափոխվող այս կարգի բառերը։

Բառասկիզբն էլ իր հնչական օրենքներն է պարտադրում. այդ պատճառով, դիցուք, բժիշկ–բ[ը]ժիշկ բառը ձայնավորի սղումով դառնում է բ[ը]ժ[ը]շկի, բ[ը]ժ[ը]շկել, բ[ը]ժ[ը]շկություն, որոնք արտասանվում են երկու գաղտնավանկով։

[3] Այս միտքը մեզ հուշել է է. Բ. Աղայանը։

Երբ բառը վերջանում է երկու բաղաձայնով, գաղտնավանկ է կազմվում նաև այն դեպքերում (դրանք սակավաթիվ են), երբ սղված ձայնավորի պատճառով իրար հանդիպած բաղաձայնները կապակցելի են, ինչպես՝ փախ[ը]ստական, կոր[ը]ստյան, խար[ը]սխել, պար[ը]սպել, ճար[ը]ստանալ, ինչպես և՝ աղմ[ը]կել, խարխ[ը]լել, f[ը]rf[ը]ջալ, թեև խս, rս, դմ, rh, rf վանկեր հայերենում կան, այսինքն՝ դրանք կապակցելի հնչյուններ են։ Այս բանում դեր է կատարում, հավանաբար, մի կողմից՝ բառաճանաչողական գործոնը, մյուս կողմից՝ բաղաձայնական խմբի բնույթը։ Այսպես՝ սա, սպ հնչյուններին բաղաձայն նախորդելու դեպքում (տե՛ս վերոհիշյալ բառերը), հայերենի հնչական ընդհանուր օրինաչափությամբ այդ հնչյուններից առաջ երևան է գալիս ը-ի հնչման անհրաժեշտություն (հմմտ. ան[ը]սպասելի, սն[ը]ստուլգ և այլն)։

Այն դեպքերում, երբ սղված ձայնավորի պատճառով իրար հանդիպած 3 բաղաձայններից առաջին երկուսը վանկավերջում կապակցելի են, սովորաբար գաղտնավանկ չի հնչվում, ինչպես՝ կ[ը]ճն/ռոտել (հմմտ. կճիռ), երգ/չախումբ (հմմտ. երգիչ), դարշ/նագույն (հմմտ. դարչին), փ[ը]ղձ/կալ, (հմմտ. փղձուկ), երկ/ռագունդ (հմմտ. երկիր), գեղջ/կական (հմմտ. գեղջուկ), բ[ը]մբ/կաճար (հմմտ. թմբուկ), ըմբ/շամարտ (հմմտ. ըմբիշ), մարմ/նամարզիկ (հմմտ. մարմին), սաստ/կաձայն (հմմտ. սաստիկ), կարմ/ռախայտ (հմմտ. կարմիր), խորտ/կարան (հմմտ. խորտիկ), թ[ը]ռչ/նաբույծ (հմմտ. թռչուն) և այլն։

Այս կարգի բառերում սղված ձայնավորի տեղում գաղտնավանկ կազմելը հանձնարարելի չէ, ինչպես երբեմն հնչում են՝ մարմ[ը]նամարզիկ, մարմ[ը]նավորել, թռչ[ը]նային[4], կրկ[ը]նել, փոխանակ՝ մարմ/նավորել, մարմ/նամարզիկ, թռչ/նային, կրկ/նել և այլն։

Մի շարք բառերում, անհնչյունափոխ համապատասխան ձևերի ազդեցությամբ, երբեմն գաղտնավանկային ը է հնչվում նաև այն դեպքերում, երբ միայն երկու բաղաձայն են իրար հանդիպում։ Այդպիսի բառերում ը-ի հնչման անհրաժեշտություն բնավ չի առաջանում։ Օրինակ՝ վճ[ը]ռել, փոխանակ՝ վճ/ռել (հմմտ. վճիռ), կշ[ը]ռել, փոխանակ՝ կշ/ռել (հմմտ. կշիռ), օժ[ը]տել, փոխ. օժ/տել (հմմտ. օժիտ), պատ[ը]ժել, փոխ. պատ/ժել (հմմտ. պատիժ), ինչպես նաև՝ fճ[ը]նել, փոխ. fճ/նել, զճ[ը]նել, փոխ. զճ/նել, կամ թե՝ ժպ[ը]տադեմ, պան[ը]ռագործ, վճ[ը]ռական, փոխանակ՝ ժպ/տադեմ, պան/ռագործ, վճ/ռական և այլն։ Չէ՞ որ մենք չենք հնչում մաf[ը]rել, մաf[ը]rաuեr, այն պատճառով, որ ու ձայնավորը սղված է, այլ՝ մաf/rել, մաf/rաuեr (հմմտ. մաfուr), չենք հնչում ճով[ը]տաշուշան, այլ՝ ճով/տաշուշան (հմմտ. ճովիտ), կոշ[ը]կավոr, այլ՝ կոշ/կավոr (հմմտ. կոշիկ) և այլն։

Գաղտնավանկային ը-ի անհարկի հնչումը, որը երբեմն երևան է գալիս նաև գրական լեզվին լիովին տիրապետող անձանց խոսքում, ժողովրդական հնչման ազդեցություն է։ Գրական ուղղախոսական նորմայի տեսակետից այդպիսի հնչումը մերժելի է։

Բառամիջում չորս բաղաձայն լինելու դեպքում նրանցից երկուսի միջև սովորաբար հնչվում է ը. օրինակ՝ ճանգ[ը]rվան, ընկ[ը]rկել, ունկ[ը]նդրել

4 Դրությամբ մեջ այստեղ և այսուհետև նշվում է այն գաղտնավանկը, որի մասին տվյալ դեպքում խոսվում է։

և այլն։ Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ բաղաձայնական խմբի վերջին բաղաձայնը յ է, իսկ առաջին երկուսը կապակցելի, ինչպես՝ երդ/վյալ, ոսպ/նյակ, Բայբուրդ/ցյան, Մկրա/չյան և այլն։ Բացառություն են կազմում նաև նախկին f հոգնակերտով կազմված այն բառերը, որոնք ստանում են հոգնակիի ներ վերջավորությունը՝ բոունցf/ներ, առանցf/ներ, միջանցf/ներ և այլն։

Բաղաձայնի և r, ն, ղ, ռ հնչյունների զուգորդումը բառավերջում, որն իրացվում է ը-ի միջոցով (կարծ[ը]r, մեղ[ը]r և այլն), նույնությամբ պահպանվում է բառամիջում, եթե r, ն, ղ, ռ (նաև լ) հնչյուններին հաջորդում է բաղաձայն, այսինքն՝ եթե այս հնչյունները հայտնվում են միջբաղաձայնային դիրքում. օրինակ՝ սան[ը]r-սան[ը]rվել, եզ[ը]r-եզ[ը]rվել, ինչպես և՝ շատ[ը]rվան, մատ[ը]ռվակ, պատ[ը]rվակ, հանգ[ը]rվան, ակ[ը]ննայտ, ակ[ը]նդետ, կոr[ը]նգան, նաև՝ ըոցկ[ը]լտալ, մագ[ը]լցել, օտար բառերում ևս՝ ջենտ[ը]լմեն, Սինգ[ը]լտոն, Ջատ[ը]rջի, Տոr[ը]նդայկ և այլն։

Գաղտնավանկը վերանում է, երբ բաղաձայնի և r, ն, ղ, ռ նաև լ հնչյունների զուգորդությանը բառի աճման ժամանակ հաջորդում է ձայնավոր հնչյուն, ինչպես՝ սան[ը]r-սան/rել, մեղ[ը]r-մեղ/rահաց, եզ[ը]r-եզ/rահանգել, ման[ը]r-ման/rուf, աստ[ը]ղ-աստ/ղալից, կոն[ը]ղ-կոն/ղի, ղրո[ը]նբաց, բայց՝ ղռ/նապան։ Հնչական այս օրինաչափությունը դիտվում է նաև համապատասխան հնչյուններ ունեցող օտարազգի բառերում. օրինակ՝ մետ[ը]r-մետ/rաչուի, մինիստ[ը]r-մինիստ/rություն, ցիկ[ը]լ-ցիկ/լային, անսամբ[ը]լ-անսամբ/լի և այլն[5]։

Կրավորականի վ ածանցն ավելանալով բայամիջի բաղաձայնական խմբին, փոխում է նրա հնչական հարաբերակցությունը։ Այդ կարգի բայերը ը-ի հնչման տեղի հարցում մի շարք դեպքերում հանդես են բերում որոշ տատանումներ։

Այն բայերը, որոնցում վ կրավորական ածանցին նախորդում են երկու կապակցելի բաղաձայններ, ընդհանուր հիմունքով արտասանվում են առանց գաղտնավանկի. ինչպես՝ վարձ/վել, ագդ/վել, կերտ/վել, հաղթ/վել, հարթ/վել, ջարդ/վել, մերժ/վել, կորգ/վել, գարկ/վել, գնդ/վել, հնազանդ/վել, հրահանգ/-վել, սրբ/վել, հնչ/վել, թմբ/վել, կարգ/վել, դարս/վել, խմբ/վել, գունազարդ/-վել, բարդ/վել, խեղդ/վել, խայթ/վել, օժտ/վել, գժտ/վել, կարհ/վել, վերց/վել, շարժ/վել, վարժ/վել, մերժ/վել, կանխ/վել, բաշխ/վել, դարձ/վել, հարց/վել, կատարելագործ/վել, լալկ/վել, երկփեղկ/վել, հղկ/վել, կեղծ/վել, ենթարկ/վել, փոխարկ/վել, գրկ/վել, ընդգրկ/վել, զրկ/վել, դիմազրկ/վել, պրկ/վել, շնորհ/-վել, առաղարձ/վել, զեղչ/վել, կանչ/վել, առնչ/վել, գսպ/վել, շնջ/վել, թարս/վել, հշտ/վել, այր/վել, գերազանց/վել, ճեղք/վել, կնք/վել, հերք/վել և այլն։

Եթե կրավորական վ ածանցին նախորդող երկու բաղաձայններն անկապակցելի են վանկավերջում, ապա առաջ է գալիս ը-ի հնչման անհրաժեշ-

---

5 Ռուսերենում, թեև գաղտնավանկի ըմբռնում չկա, սակայն այնտեղ ևս բառավերջում աղմկային հնչյունների և ձայնորդների միջև, ինչպես նշվում է, առաջանում է ձայնավորական ə ներդիր, օրինակ՝ Пётэр, мудэр, вопэль և այլն։ (Л. Л. Буланин, Фонетика современного русского языка, М., 1970, էջ 125)։ Այդ ներդիրը վերանում է բառի աճման ժամանակ ձայնավոր հնչյունի կցման դեպքում. օրինակ՝ мудэр — мудрый, Пётэр — Петра, кадэр — кадровик և այլն։

տություն. ընդ որում՝ ը-ն այս դեպքում սովորաբար հնչվում է անմիջապես վ-ից առաջ, իսկ նախորդող երկու բաղաձայնների միջև վանկաբաժանը պահպանվում է, ինչպես՝ մատ/նել–մատն[ը]վել, հագ/նել, հագն[ը]վել, ընկն[ը]վել, պատժ[ը]վել *(շատ տարածված է նաև* պատ[ը]ժվել *հնչումը),* զարն[ը]վել, գտն[ը]վել, հայտն[ը]վել, պճն[ը]վել, բռն[ը]վել, մեկն[ը]վել, խառն[ը]վել (խառն[ը]վածք), օրհն[ը]վել, պատմ[ը]վել (պատմ[ը]վածք), վերականգն[ը]վել, խցկ[ը]վել, ուղղ[ը]վել, զնն[ը]վել, քնն[ը]վել, բեռն[ը]վել, մատն[ը]վել, վատն[ը]վել, հաշվ[ը]վել, ճնշ[ը]վել, պառակա[ը]վել[6], շտկ[ը]վել, բազմապատկ[ը]վել, կոճկ[ը]վել, գիտակց[ը]վել. ուղեկց[ը]վել, կապակց[ը]վել (կցվ *հնչյունախմբում ը-ն թույլ է հնչվում),* կրպց[ը]վել, տեսն[ը]վել, առն[ը]վել, թռչն[ը]վել, ճիմն[ը]վել, մտց[ը]վել, փակց[ը]վել, օգտ[ը]վել, խոն[ը]վել, թաքն[ը]վել, օժտ[ը]վել, հանձն[ը]վել, կրկն[ը]վել *(ավելի շատ հնչվում է* կրկ[ը]նվել):

Այս բայերը, որոնք գրեթե բոլորն են, անկախ այն բանից, ունեն սղված ձայնավոր, թե ոչ, հնչվում են նույն սկզբունքով։ Այսպիսի հնչումը պայմանավորված է արևելահայերենին հատուկ ավանդական արտասանությամբ։

Կանոնից շեղվում են վ *ածանցով կազմված այն բայերը, որոնցում առկա է բաղաձայն+*r, n, l+վ *զուգորդումը, այսինքն այն դեպքը, երբ* r, n, l *հնչյունները միջբաղաձայնական դիրքում են։ Այս դեպքում գաղտնավանկը կազմվում է ոչ թե* վ *կրավորականից, այլ* r, n, l *հնչյուններից առաջ։ Օրինակ՝* սապ[ը]rվել, կոտ[ը]rվել, կտ[ը]rվել, մաf[ը]rվել, ման[ը]rվել, սան[ը]rվել, պատ[ը]nվել, մկ[ը]rտվել, սփ[ը]nվել, բացատ[ը]rվել, կերակ[ը]rվել, ընտ[ը]rվել, փշ[ը]rվել, կշ[ը]nվել, փորփ[ը]rվել, frf[ը]rվել, ծալծ[ը]lվել, փխ[ը]lվել, մամ[ը]lվել[7]:

Այս բայերի գաղտնավանկի հնչման տեղի հարցում դեր է կատարում, իհարկե, նաև անհնչյունափոխ ձևերի ազդեցությունը (հմմտ. կերակուr–կերակ[ը]rվել) *և այլն. այսինքն, ը-ն հնչվում է սղված ձայնավորի տեղում։ Բայց, ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, բոլոր բայերը չեն, որ ունեն սղված ձայնավոր։ Արևելահայերենին հատուկ ընդհանուր օրինաչափությամբ, անկախ այն բանից՝ կա սղված ձայնավոր, թե չկա, գաղտնավանկը սովորաբար կազմվում է* r, n, l *հնչյուններից առաջ։*

Կրավորական վ *ածանցով կազմված մի շարք բայերում, մեծ մասամբ չհնչյունափոխված ձևի ազդեցությամբ, ինչպես և համաբանությամբ, գաղտնավանկի հնչման տեղի հարցում երևան են գալիս շեղումներ, այսինքն՝ գաղտնավանկը* վ *կրավորականից առաջ հնչվելու փոխարեն, հնչվում է սղված*

---

6 *Հայերենին ոչ հատուկ մի շարք վանկավերջեր, որոնք ներկայումս հաճախակի հանդիպում են փոխառյալ բառերում, ինչպես՝* տակտ, օրյեկտ, շանս, ուանշ *և այլն, որոշ չափով ազդում են հայերենի արտասանության վրա։ Այդ պատճառով, օրինակ,* ճնշվել, պառակտվել *բառերը ավելի շուտ հնչվում են առանց գաղտնավանկի՝* ճնշ/վել, պառակտ/վել *և ոչ՝* ճնշ[ը]վել, պառակտ[ը]վել, *թեև* կա-ով *և* նշ-ով *վանկեր հայերենում չունենք։*

7 *Արևմտահայերենում ընդունված է* սափr[ը]վել, կոտr[ը]վել, մաtr[ը]վել *հնչումը. այսինքն գաղտնավանկը հնչվում է մնացած նույն կարգի բայերի նման՝* վ-*ից առաջ (Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 273)։ Արևմտահայերենում՝ կրավորական բայերի հնչումը գաղտնավանկի տեղի հարցում շատ կանոնավոր է։ Բոլոր դեպքերում հաստատուն կերպով այն հնչվում է* վ *ածանցից առաջ։ Այդպես է նաև* կրկնվել, պատժվել *բայերում, որոնք կանոնավորապես, առանց տատանման, հնչվում են՝* կրկն[ը]վել, պատժ[ը]վել։

ձայնավորի տեղում։ Օրինակ՝ ուղիղ-(ուղղել)-ուղ[ը]ղվել, փոխանակ՝ ուղ-ղ[ը]վել, օժիտ-(օժտել)-օժ[ը]տվել, փոխանակ՝ օժտ[ը]վել, պատիժ-(պատ-ժել)-պատ[ը]ժվել, փոխ. պատժ[ը]վել, օգուտ-(օգտել)-օգ[ը]տվել, փոխ. օգտ[ը]վել, «գնին»-(գնեել)-գն[ը]նվել, փոխ. գնն[ը]վել, «fնին»-(fննել)-fն[ը]նվել, փոխ. fնն[ը]վել, ինչպես և՝ ճայտ[ը]նվել, փոխ. ճայտն[ը]վել. գտ[ը]նվել, փոխ. գտն[ը]վել, ճագ[ը]նվել, փոխ. ճագն[ը]վել. վերա-կանգ[ը]նվել, փոխ. վերականգն[ը]վել, պն[ը]նվել, փոխ. պնն[ը]վել, մատ[ը]նվել, փոխ. մատն[ը]վել։

Ինչպես նշեցինք, շեղումը մեծ մասամբ առաջանում է չհնչյունափոխ-ված ձևերի ազդեցությամբ, իսկ երբեմն այդ արվում է նաև գիտակցաբար։

Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ ը-ն միշտ չէ, որ հնչվում է սղված ձայնավորի տեղում։

Այդ մասին Մ. Աբեղյանը մասնավորապես նշում է, որ «ը ձայնավորը միշտ անպատճառ սղված ձայնավորի տեղը չի մտնում, այլ երբեմն ավելա-նում է այնպիսի բաղաձայնների միջև, ուր ոչ մի ձայնավոր չկա բառի չսղված ձևով, օրինակ՝ պառավներ բառի երկրորդ վանկի ա ձայնավորը մի քանի բար-բառների մեջ սղվում է պառվներ։ Բայց այս սղված ձևը չի արտասանվում ոչ երկվանկ «պառվ-ներ», որ անհնարին է, որովհետև պառվ վանկ չկա մեր լեզվի մեջ, և ոչ էլ «պառրվներ», ինչպես պիտի սպասեինք, այլ պառվրներ»[8]։ Համեմատիր նաև՝ կտրատել և սղումով՝ կտրտել, ոչ՝ կտրրտել, մտուցանել, սղումով՝ մտցրնել, ոչ՝ մտրցնել[9]։

Կարելի է բերել այլ օրինակներ ևս, որոնցում ը-ն հաստատուն կերպով հնչվում է ոչ սղված ձայնավորի տեղում, ինչպես՝ կոճկ[ը]վել (հմմտ. կո-ճակ), շտկ[ը]վել (հմմտ. շիտակ), ստ[ը]րկանալ (հմմտ. ստրուկ), բաղ-մսպատկ[ը]վել (հմմտ. բազմապատիկ), գիտակց[ը]վել (հմմտ. գիտակից), ճաշվ[ը]վել (հմմտ. ճաշիվ), շաբթ[ը]վա (հմմտ. շաբաթ)[10], խցկ[ը]վել (հմմտ. խցիկ) և այլն։

Ավելորդ չէ նկատի ունենալ նաև բարբառային մի շարք ձևեր, ինչպես՝ մաշիկ-մաշկ[ը]ներ, գլուխ-գլխ[ը]ներ, տանիկ-տանկ[ը]ներ, վստեկ-վառ-կ[ը]ներ, նաև՝ սովորեցնել-սովորց[ը]նել, շվացնել-շվց[ը]նել, վախեցնել-վախց[ը]նել և այլն, որոնցում ը-ն դարձյալ հնչվում է ոչ սղված ձայնավո-րի տեղում։

Դա նշանակում է, որ օժտվել, պատժվել, ուղղվել, կրկնվել և այլն, կազմվում են ոչ թե օժիտ, պատիժ, ուղիղ, կրկին բառերից ի ձայնավորի սղումով, այլ օժտել, պատժել, ուղղել, կրկնել բայերից վ կրավորականի հա-վելումով։

Բանն այն է, որ եթե հնչական նորման որոշ դեպքերում պայմանավոր-ված է հայերենի հնչյունական ամբողջ համակարգով, վանկակազմության հայերենին հատուկ կանոններով կամ հնչյունների զուգորդման հայերենին հատուկ առանձնահատկություններով, ապա որոշ դեպքերում էլ ուղղախո-սական նորման հենվում է միմիայն ավանդույթի վրա, որը կարող է վերա-բերել ոչ միայն առանձին բառախմբերի, այլև երբեմն առանձին բառերի։

---

8 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 108։

9 Նույն տեղում։

10 Ճիշտ է առանց ա-ի սղման՝ շաբաթվա ձևը։

Այդպես է, օրինակ, վարդ, աղջիկ, վարձել, խեղդել *և նման այլ բառերի արտասանությունը, որոնք հնչվում են գրությունից տարբեր՝* վար[թ], ա[խչ]իկ, վար[պ]ել, խե[խտ]ել, *այդպես է նաև* հայտնվել, գտնվել, օժտվել, հագնվել *և վերևում նշված վ կրավորականով նույն կարգի այլ բայերի արտասանությունը, որոնցում գաղտնավանկային* ը-*ի հնչումը օրինաչափորեն կայունացել է որոշակի տեղում։ Ավանդական հնչում ունեն, օրինակ,* բգկ[ը]տել *(արևմտահայերենում՝* բղ[ը]կտել), քստ[ը]մնելի *(ոչ՝* քստմ[ը]նելի), ին[ը]սուն, տասն[ը]մեկ, տասն[ը]չորս *(ոչ՝* ին[ը]նսուն, տաս[ը]նմեկ, տաս[ը]նչորս, *ինչպես պետք է սպասեինք) բառերը։*

Բառամիջում գաղտնավանկային ը-*ի մասին խոսելիս, չի կարելի անտեսել նաև այն դեպքերը, երբ իրար հանդիպող երեք բաղաձայններից թեև երկուսը վանկավերջում կապակցելի են, սակայն վանկաբաժանում, իրար հանդիպած բաղաձայնների բնույթով պայմանավորված՝ նրանց միջև հնչվում է թույլ* ը: *Այդ* ը-*ն վանկարար չէ, սակայն ժողովրդական հնչմամբ հեշտությամբ վերածվում է լիահունչ վանկի։ Օրինակ՝* տանջըվել–տանջ[ը]վել, վերցընել–վերց[ը]նել, պրծընել–պրծ[ը]նել, սեղմըվել–սեղմ[ը]վել, զսպըվել–զսպ[ը]վել, դրոշմըվել–դրոշմ[ը]վել, շըջըվել–շրջ[ը]վել, բարդըվել–բարդ[ը]վել *և այլն։*

Այսպիսի դեպքերում լիահունչ գաղտնավանկով, այսինքն՝ ընդգծված ը-*ով, հնչումը շեղում է գրական արտասանական նորմայից, և պետք է դրանից խուսափել։*

Անցյալի մեր քերականները, հատկապես Ա. Այտընյանը, նշել են, որ ը-*ի անհարկի հավելումները արտասանության ժամանակ, որով բառը մեկ վանկով ավելանում է, հանձնարարելի չեն*[11]*։*

Ը-ն պետք է արտասանել միայն այն դեպքում, երբ այդ անհրաժեշտ է, երբ այդ պահանջում է բառի ճիշտ, ուղղախոսական նորմային համապատասխան հնչումը։

Գաղտնավանկային ը-*ն հայերենում մի շարք դեպքերում հանդես է գալիս հնչույթաբանական, իմաստազատիչ արժեքով, նվազագույն հակադրություն կազմելով համապատասխան բառերի և բառաձևերի հետ։ Այդ նշանակում է, որ միայն* ը-*ի արտասանվելու կամ չարտասանվելու պայմանով, մի բառ կամ բառաձև կարող է տարբերվել մեկ այլ բառից կամ բառաձևից։*

Ը-ի արտասանության հնչույթաբանական արժեքը դրսևորվում է և՛ բառավերջում (փակ վանկում), և՛ բառամիջում։ Այդ դեպքերում ը-*ի և՛ տեղը, և՛ հնչումը պարտադիր է, և նրա արտասանությունը որևէ երկվություն կամ տատանում չի հանդուրժում։*

Բառավերջում գաղտնավանկային ը-*ի հնչումը պարտադիր է* ս, դ *հոդերից առաջ, եթե* ս-*ին և* դ-*ին նախորդում է բաղաձայն հնչյուն. օրինակ՝* սիրտ[ը]ս, տուն[ը]ս, մայր[ը]ս, հույս[ը]ս, հույսեր[ը]ս, սիրտ[ը]դ, տուն[ը]դ, մայր[ը]դ, հույս[ը]դ, հույսեր[ը]դ *և այլն։*

Ը-ի հնչույթային, իմաստազատիչ դերը ակնբախ է դառնում, երբ համեմատում ենք հոդավոր բառերի հնչումը նույնպիսի վերջ ունեցող անհոդավոր բառերի հնչման հետ։ Համեմատիր, օրինակ, ստամոքս, դուքս, մետաքս,

---

11 *Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 348։*

մաքս և՝ միտք[ը]ս, գիրք[ը]ս, բերք[ը]ս, կյանք[ը]ս; հույս, հարս. ներս և՝ հայ[ը]ս, զինվոր[ը]ս, սար[ը]ս; բանտ, ժանտ, կենտ, պարարտ և՝ զավազանդ [նըտ], դասարանդ [նըտ], պատվանդանդ [նըտ], կանգնածներդ [րըտ] և այլն։

Ը և զրո նվազագույն հակադրություններում պարզորոշ կերպով բացահայտվում է գաղտնավանկային ը-ի՝ մի բառը մյուսից տարբերելու հնչույթային, իմաստազատիչ գործառույթը. օրինակ՝ դուրս եկավ–դուր[ը]ս եկավ, հոգս չէ–հոգ[ը]ս չէ, չափս–չափ[ը]ս, վարս–վար[ը]ս, սերտ–սերդ [րըտ] *և այլն։*

Ինչպես երևում է վերոհիշյալ հակադրություններում, ը-ի հնչումով, գրությամբ նույնական երկու միավորներ տարբերվում են մեկը մյուսից[12]*։*

Ստացական ն *հոդով բառաձևերը հակադրության մեջ չեն մտնում անհոդավոր բառերի հետ, որովհետև* ն *հնչյունը առհասարակ բաղաձայնի հաջորդելով, լինի այն հոդ, թե ոչ, իրենից առաջ պահանջում է գաղտնավանկային հնչում, ինչպես՝* հյուս[ը]ն, այսինք[ը]ն, ուրեմ[ը]ն, հայր[ը]ն, գիրք[ը]ն *և այլն։*

Հոդից առաջ հնչվող գաղտնավանկը սովորաբար վերանում է, եթե հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, օրինակ՝ քույր–նա–սաց, սիրտ–նու–րախ, սար–նի–վեր *և այլն։*

Բառամիջում ը *գաղտնավանկով և առանց ը-ի նվազագույն հակադրություն ստեղծվում է բարդ բառերում։ Համեմատիր, օրինակ,* մազախտություն *և* մազախ[ը]տություն, միակնություն *և* միակ[ը]նություն, խոտանման *(սեռական հոլով* խոտանում *բառի) և* խոտան[ը]ման, ֆաբրիկատներ *և* ֆաբրիկատ[ը]ներ, *նաև՝* անցնել *(փողոցն* անցնել*) և* անց[ը]նել[13]*։*

Քանի որ գաղտնավանկային ը-ն գրային արտահայտություն չունի, ապա ը-ով արտասանության հակադրությունը ինչպես բառամիջում, այնպես էլ բառավերջում, բացահայտվում է միայն կապակցված խոսքում, որտեղ նույնագիր բառը ըստ համապատասխան իմաստի, այսինքն՝ ըստ կոնտեքստի թելադրանքի, արտասանվում է ը-ով կամ առանց ը-ի, նվազագույն հակադրության մեջ մտնելով համապատասխան բառի կամ բառաձևի հետ։

Կապակցված խոսքից դուրս հակադրությունը վերանում է և հակադրվող եզրերը չեզոքանում են (գրության մեջ)։ Համեմատիր, օրինակ, դարս *(հագուստի* դարս*) և* դարս *(«*դարս *դաժան է»),* որս *(«Անտառում* որս *էին անում») և* որս *(«*Որս *էր մեղավոր մեղանից, չէր կարող ասել»),* խոտանման *(«*խոտանման *ճանապարհով արտադրանքի մի մասը դուրս էր գրվում») և* խոտանման *(«Դա* խոտանման *մի բույս է, որն ունի բուժիչ հատկություններ»)։*

Այսպիսով, եթե մի շարք դեպքերում, ինչպես տեսանք վերևում, գաղտնավանկային ը-ի արտասանությունը պայմանավորված էր այլևայլ պատճառներով՝ բառասկզբի դիրքով, ձայնավորի սղումով, բաղաձայնական կուտակումներում անկապակցելի հնչյունների իրացման անհրաժեշտությամբ և այլն, երևան բերելով ը-ի արտասանության և նրա տեղի հարցում որոշ տա-

---

[12] *Սրանից բխում է, որ բաղաձայնավերջ բառերը հայերենում ստանում են ոչ թե* ս, դ *հոդերը, այլ* ըս, ըդ, *որոնք որպես քերականական իմաստների կրողներ, հանդիսանում են դիրքային տարբերակներ ձայնավորավերջ բառերին կցվող ս, դ հոդերի կողքին։*

[13] *Այս բայը գրվում է նաև ը-ով։*

տանումներ և անկայունություն, ապա վերջին դեպքում, ը-ի հաստատուն տեղը և նույն ու անփոփոխ հնչումը թելադրվում է նրա որոշակի իմաստագոյացնող նշանակությամբ, ինչպես այդ որոշակի կերպով երևաց նվազագույն հակադրություններում։

ОСНОВНЫЕ ПРОИЗНОСИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СКРЫТОГО СЛОГА -Ը- АРМЯНСКОГО ЯЗЫКА

ТЕРЕЗА КАРАГЮЛЯН

Резюме

Исследование произносительных закономерностей скрытого слогового гласного ը в позициях начала, середины и конца слова в современном армянском языке привело к заключению, что произношение ը, не имеющего письменного изображения, обсуловлено следующими факторами: позицией звуков (ср. правило одного согласного начала слова и слога), характером звуков (при встрече более чем двух согласных), отчасти звукоизменением (при выпадении гласных) и структурой слова (соотношением компонентов слова, ср. *խոտանման* «браковки» и *խոտան[ը]ման* «наподобие травы»). В последнем случае произношение ը твердо и никаких колебаний не допускает, что обусловлено его смыслоразличительным, фонологическим значением.